ԲԵՌՆԱՓՈԽԱԴՐՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Արտասահմանյան պահեստում բեռի ընդունում և մուտքագրում համակարգ

1.1 Գլոբբինգի բեռնափոխադրման կազմակերպման ծառայությունից օգտվելու համար Հաճախորդն իր բեռը պարտավոր է ուղարկել Գլոբբինգի արտասահմանյան պահեստի հասցեով:

1.2 Բեռի վրա հասցեատեր բաժնում պետք է արտացոլվեն Գլոբբինգի կողմից տրամադրված բոլոր տեղեկությունները, հակառակ դեպքում Գլոբբինգը պատասխանատվություն չի կրում բեռը պահեստում չընդունելու, ուշացումով նույնականացնելու, առաքումն ուշացնելու կամ բեռը չառաքելու համար:

1.3 Բեռն ընդունված է համարվում այն ժամանակ, երբ պահեստում Գլոբբինգի աշխատակիցների կողմից Բեռն ընդունվում է, նույնականացվում և սքանավորման միջոցով մուտքագրվում է համակարգ:

1.4 Բեռը համակարգ է մուտքագրվում այն փաստացի պահեստ առաքվելուց հետո մինչև 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում:

1.5 Բեռը համակարգ մուտքագրելուց հետո Հաճախորդի անձնական էջում կարտացոլվեն առաքանու վերաբերյալ հետևյալ տեղեկությունները՝

ա/ պահեստ մուտքագրումից սկսած փոխադրման ընթացքին հետևելու համարը (Tracking Number),

բ/ ստացողը ՀՀ-ում,

գ/ առաքման և ստացման երկրները,

դ/ առաքման եղանակը,

ե/ ընդունման ամսաթիվը,

զ/ իրական քաշը,

է/ առաքման արժեքը:

2. Բեռի փաթեթավորումը. Վերափաթեթավորում

2.1 Բեռները տեղափոխման են ընդունվում փաթեթավորված: Սակայն Ընկերությունը իրավունք է վերապահում ստուգել փաթեթավորված Բեռի պարունակությունը՝ նրանում տեղափոխման համար արգելված ապրանքների առկայությունը բացառելու նպատակով:

2.2 Բեռների փաթեթավորումը համարվում է միայն Հաճախորդի պարտականությունը: Ընկերությունը պատասխանատվություն չի կրում սխալ կամ թերի փաթեթավորման հետևանքով Բեռներին հասցրած վնասի համար:

2.3 Այն դեպքում, երբ առկա է Բեռի փաստացի և/կամ ծավալային քաշի նվազեցման կամ բեռների համախմբման անհրաժեշտություն, Գլոբբինգն իր հայեցողությամբ իրավունք ունի Պահեստում վերափաթեթավորել Բեռը: Վերափաթեթավորումը կատարվում է անվճար:

2.4 Վերափաթեթավորում չի իրականացվում Իտալիայի, Գերմանիայի և Հունաստանի պահեստներում:

3. Արգելված/չփոխադրվող Բեռ

3.1 Գլոբբինգը պարտավոր չէ կատարել այնպիսի Բեռների փոխադրման կազմակերպումը, որոնք Պահեստի գտնվելու վայրի պետության կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ արգելված է փոխադրել:

3.2 Բեռնափոխադրման համար ընտրված եղանակից, ինչպես նաև պահեստի երկրից կախված արգելված համարվող իրերի ցանկը սահմանված է Հաճախորդի անձնական էջում՝ արտասահմանյան պահեստների հասցեներ բաժնում:

3.3 Գլոբբինգի պահեստ արգելված բեռ ստանալու դեպքում Գլոբբինգը պատասխանատվություն չի կրում այդ Բեռի համար, իսկ դրա վերադարձման, ոչնչացման կամ պահեստում պահպանության համար ամբողջական պատասխանատվություն կրում է Հաճախորդը:

3.4 Բոլոր դեպքերում Գլոբբինգը չի փոխադրում զենք, զինամթերք, թանկարժեք մետաղների ձուլակտորներ կամ ջարդոն, արտարժույթ, ծխախոտ, վտանգավոր, պայթուցիկ կամ շուտ հրկիզվող նյութեր, բույսեր, կենդանիներ, միջատներ, խմիչք, սնունդ:

3.5 Գլոբբինգի արտասահմանյան պահեստներ ընդունված նույնականացման խնդիր ունեցող բոլոր առաքանիները 3 ամիս անց ոչնչացվում են:

3.6 Գլոբբինգն իրավունք ունի հրաժարվելու այն Բեռների ընդունումից, որոնք չունեն համապատասխան փաթեթավորում կամ ձևակերպում:

4. Բեռի փոխադրման կազմակերպումը

4.1 Բեռը Պահեստում մուտքագրելուց հետո Գլոբբինգը կազմակերպում է Բեռի փոխադրումը Հայաստանի Հանրապետություն:

4.2 Ժամկետների հաշվարկի սկիզբ է համարվում բեռը Գլոբբինգի համապատասխան արտասահմանյան պահեստ մուտքագրման (ներքին համակարգ բեռի սկանավորման) օրը, իսկ ժամկետի ավարտման պահ է համարվում բեռը Գլոբբինգի երևանյան հիմնական ստացման վայրեր մուտքագրման (ներքին համակարգ բեռի սկանավորման) օրը: Ժամկետների հաշվարկի մեջ չեն մտնում ՀՀ տարածքում կամ դեպի լոքեր առաքումները, բեռը լրացուցիչ մաքսային հսկողության կամ զննության համար պահելը, ինչպես նաև տրանզիտային երկրների

օդանավակայանների կամ մաքսային մարմինների կանոնների անսպասելի փոփոխությունները:

4.3 Բեռը պահեստ մուտք լինելուց հետո մինչև երկու աշխատանքային օրվա ընթացքում անցնում է սկանավորում: Գլոբբինգը իրականացնում է բեռների տեղափոխման հետագծելիության (tracking) ծրագրային ապահովում հաճախորդների համար:

4.4 Բեռնափոխադրման հայտարարված ժամկետները կրում են կողմնորոշիչ բնույթ (ժամկետների սահմանման համար հիմք են ընդունվում նախորդ տարվա բեռների առաքման փաստացի ժամկետները՝ առնվազն 80 տոկոս ճշգրտությամբ): Բեռնափոխադրման ժամկետները, ի թիվս այլնի, կարող են հետաձգվել նաև՝ պայմանավորված սեզոնային ծանրաբեռնվածությամբ (ի թիվս այլնի նոյեմբերի 11-ին, սև ուրբաթին հաջորդող ժամանակահատվածներում, չինական ուղղության դեպքում չինական ամանորն ընդգրկող ժամանակահատվածում, Լարսի անցակետը փակ կամ դժվարանցանելի լինելու դեպքում), անհաղթահարելի ուժի ազդեցության հետ կապված հանգամանքներով:

4.5 Բեռնափոխադրման ժամկետի խախտման համար մասնակի կամ ամբողջական փոխհատուցում Գլոբբինգը տրամադրում է միայն սեփական հայեցողությամբ՝ պայմանավորված ուշացման պատճառներով:

4.6 Բեռի փոխադրման ժամկետի ուշացման վերաբերյալ Գլոբբինգը ծանուցում է Հաճախորդին էլեկտրոնային փոստի միջոցով:

5. Բեռի մասին տեղեկատվության հայտարարագրում

5.1 Նախքան Բեռը Հայաստան հասնելը Հաճախորդը պարտավոր է Գլոբբինգի իր անձնական էջում հայտարարագրել Բեռի գնի (ինվոյսային արժեքի) մասին տեղեկությունը՝ ավտոմատիզացված կերպով մաքսային մարմիններին փոխանցելու համար:

5.2 Այն դեպքերում, երբ Բեռի համար գին հայտարարագրված չէ, ապա մաքսային մարմինները իրավասու են օրենքով սահմանված կարգով որոշել Բեռի գինը:

6. Բեռի ժամանումը և մաքսազերծումը

6.1 Հաճախորդը տալիս է իր համաձայնությունն առ այն, որ Ընկերության միջոցով Հայաստանի Հանրապետություն ներմուծված և Հայաստանի Հանրապետության մաքսային մարմնի պահանջով առաքանու մաքսային զննման գործընթացին Ընկերությունը (Ընկերության աշխատակիցները) լինեն Հաճախորդի լիազորված անձը ՀՀ պետական եկամուտների կոմիտեում, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի մաքսատուն-վարչություններում: Հաճախորդն

անվերապահորեն ընդունում է առաքանու մաքսային զննման գործընթացքում Ընկերության (Ընկերության աշխատակիցների) կողմից կատարված գործողությունների՝ իր անունից և ի շահ իրեն կատարված լինելը:

6.2 Բեռը Հայաստանի Հանրապետություն հասնելուց հետո Գլոբբինգը այդ մասին ծանուցում է Հաճախորդին էլեկտրոնային փոստի միջոցով՝ հայտնելով ստացման ընթացակարգն ու ժամկետը:

6.3 Ֆիզիկական անձանց բեռները դուրս են բերվում մաքսատնից և հանձնվում հասցեատերերին այն դեպքերում, եթե մաքսային մարմինների կողմից չեն առարկվում հայտարարագրված արժեքները, կամ բեռը չի հանդիսանում ֆիզիկական անձի կողմից ներմուծման համար արգելված ապրանքատեսակ:

6.4 Իրավաբանական անձանց՝ ոչ ԵԱՏՄ երկրներից առաքվող բեռները Գլոբբինգի կողմից հանձնվում են պահպանության մաքսային տերմինալին և մաքսազերծման գործընթացն իրականացվում է Հաճախորդի կողմից: Մաքսային տերմինալ Բեռի մուտքից 48 ժամը լրանալուց հետո մաքսային տերմինալի կողմից սահմանվում են պահեստավորման և պահպանության վճարներ, որոնք, համաձայն Գլոբբինգի կողմից դուրս գրված հաշիվ-ապրանքագրի, ենթակա են վճարման Հաճախորդի կողմից: ԵԱՏՄ երկրներից առաքման դեպքում, եթե առկա են անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը, Գլոբբինգի կողմից դուրս են բերվում մաքսատնից և հանձնվում Հաճախորդին:

7. Բեռի ստացման վայրը և կարգը

7.1 Հաճախորդը կարող է ընտրել առաքանիների առավել հարմար ստացման վայր կայքում առաջարկվող հասցեներից: Բեռը Հայաստանի Հանրապետություն հասնելուց և մաքսատնից դուրս գալուն պես անվճար կտեղափոխվի պատվերի ստացման վայր և պատրաստ կլինի ստացման. Երևանում՝ հաջորդ աշխատանքային օրը, ՀՀ մարզերում՝ 1-2 աշխատանքային օրվա ընթացքում:

7.2 Հաճախորդը կամ նրա նշած հասցեատերը պարտավոր է ստանալ Բեռը Հայաստան հասնելուց հետո 90 օրվա ընթացքում, այլապես Գլոբբինգն իրավունք ունի այն տնօրինել սեփական հայեցողությամբ՝ ցանկացած եղանակով:

7.3 Հաճախորդն իր ցանկությամբ կարող է օգտվել «Առաքում Տուն» և «Առաքում Լոքեր» ծառայություններից, որի կատարման ժակետները նշվում են պատվերի գրանցման ժամանակ:

8. Ծառայության գինը և վճարման կարգը

8.1 Ֆիզիկական անձանց համար Գլոբբինգի կողմից մատուցված Ծառայության գինը որոշվում է ըստ Բեռի փաստացի քաշի, բացառությամբ գերծավալային քաշով Բեռների:

8.2 Իրավաբանական անձանց համար ցանկացած տարբերակով, իսկ ֆիզիկական անձանց համար ծովային տարբերակներով կատարվող առաքումների համար հիմք է ընդունվում Բեռի ֆիզիկական և ծավալային քաշերից առավելագույնը:

8.3 Բեռը համարվում է գերծավալային քաշով, եթե կողմերի երկարությունների գումարը գերազանցում է 150 սմ-ը և ծավալային քաշը 2 և ավելի անգամ գերազանցում է փաստացի քաշը: Այս դեպքում հաշվարկվում է ըստ Բեռի ծավալային քաշի, սակայն գործում է հատուկ զեղչված սակագին:

8.4 Ծավալային քաշը հաշվարկվում է միջազգայնորեն ընդունված հետևյալ բանաձևով՝ **Երկարություն X Լայնություն X Բարձրություն / 5000 (սմ / կգ)**:

8.5 Բեռնափոխադրման ծառայության **գնացուցակ**՝

Երկիր	Առաքման գին*(կգ՝	Մին. վճար	Գերծավալային(կգ)
ԱՄՆ էքսպրես	6000	-	4000
Անգլիա էքսպրես	6000	-	4000
Չինաստան էքսպրես	8000	-	6000
Գերմանիա էքսպրես	6500	-	5000
Դուբայ էքսպրես	5000	-	3000
ՌԴ էքսպրես	2000	-	2000
Իտալիա սուպեր ստանդարտ	3500	-	2000
ՌԴ ցամաք	1000	4000	-
Հունաստան ցամաք	3000	-	2000
ԱՄՆ ստանդարտ	1500	15000	
Չինաստան ստանդարտ	1500	1500	

8.6 Ծառայության դիմաց վճարումը կատարվում է Գլոբբինգի կայքում Հաճախորդի անձնական հաշիվը լիցքավորելու և Գլոբբինգին վճարը փոխանցելու միջոցով: Վճարման եղանակներն են.

ա/ Առցանց՝ Գլոբբինգի կայքում Հաճախորդի անձնական էջից:

բ/ Բանկային փոխանցում՝ իրավաբանական անձանց համար,

գ/ Mobidram, TellCell և EasyPay վճարային տերմինալների միջոցով,

8.7 Բեռի քաշը հաշվարկելիս, այն կլորացվում է 100 գրամ ճշտությամբ դեպի վերև:

9. «Առաքում տուն» ծառայություն

9.1 Բեռը Հայաստան հասնելուց հետո Հաճախորդը Գլոբբինգի կայքի իր անձնական էջից կարող է պատվիրել «Առաքում Տուն» ծառայությունը Հայաստանի ողջ տարածքով: Ծառայությունը հասանելի է, եթե հաճախորդի առաքանիների հիմնական ստացման վայրը հանդիսանում է «Արաբկիր» կամ «Նաիրի» ստացման վայրերից մեկը:

9.2 «Առաքում Տուն» ծառայության արժեքն է 500 դրամ Երևանում և 1000 դրամ մարզերում:

9.3 10 կգ և ավել քաշով բեռների համար «Առաքում Տուն» ծառայությունն իրականացվում է ԱՆՎՃԱՐ:

10. «Առաքում Լոքեր» ծառայություն

10.1 Բեռը Հայաստան հասնելուց հետո Հաճախորդը Գլոբբինգի կայքի իր անձնական էջից կարող է պատվիրել «Առաքում լոքեր» ծառայությունը, եթե հաճախորդի առաքանիների հիմնական ստացման վայրը հանդիսանում է «Արաբկիր» ստացման վայրը:

10.2 «Առաքում Լոքեր» ծառայությունն իրականացվում է ԱՆՎՃԱՐ:

10.3 Հաճախորդը պարտավոր է ստանալ բեռը 2 աշխատանքային օրվա ընթացքում, այլապես այն կվերադարձվի հիմնական ստացման վայր, որի համար կկիրառվի տույժ:

11. Պատասխանատվություն

11.1 Բեռի կորստի կամ վնասման համար պատասխանատվությունը Գլոբբինգը կրում է սկսած այն պահից, երբ պահեստը ընդունում է այն՝ սքանավորելով և նույնականացնելով բեռը:

11.2 Բոլոր դեպքերում Գլոբբինգը պատասխանատվություն չի կրում Բեռի որևէ թաքնված թերության կամ վնասվածքի համար, ինչպես նաև Բեռի արտաքին վնասվածքների համար, եթե բեռի փաթեթավորումը/արկղը/տուփը չի վնասվել Բեռնափոխադրման կազմակերպման ընթացքում կամ եթե փաթեթավորման/արկղի/տուփի վնասման ու բեռի արտաքին վնասվածքի միջև պատճառահետևանքային կապ առկա չէ:

11.3 Հաճախորդը պարտավոր է ստանալ Հայաստան փոխադրված Բեռը, իսկ հրաժարվելու դեպքում Հաճախորդը պարտավոր է Գլոբբինգին մեկ շաբաթյա ժամկետում վճարել բեռնափոխադրման կազմակերպման արժեքն ամբողջությամբ:

11.4 Առաքանիները ստանալու համար հաճախորդին տրամադրված անհատական բարկոդի գաղտնիության պատասխանատվությունը կրում է Հաճախորդը:

12. Բոնուսներ և դրանց օգտագործման կարգը

12.1 Գլոբբինգի կողմից կարող են տրամադրվել այլ բոնուսներ:

12.2 Բոնուսը կիրառելու համար անհրաժեշտ է Գլոբբինգի կայքում Հաճախորդի անհատական էջում Բոնուսային հաշվից գումարը փոխանցել ընթացիկ հաշվին:

12.3 Հաճախորդի կողմից Գլոբինգի հետ պայմանագիրը լուծելիս նրա կուտակած բոնուսները զրոյացվում են և չեն կարող օգտագործվել: